կայ զաւառաց բնակիչք՝ ըստ մեր պատմչաց աւանդութեան, և նոյն իսկ հեղինակիս, սերեալ են յԱռանայ. զոր Վաղարշակ առաջին Արշակունի թագաւոր մեր՝ կարգեց վերակացու կամ իշխանապետ Աղուանից. և ասկէ կը սկսի մեր հեղինակն ալ իր աշխարհին իշխանաց կամ թագաւորաց ազգաբանութիւնը կամ շարակարգութիւնը. վկայելով ընդ Խորենացւոյն՝ որ յիշեալ Առանն այլ էր ի ցեղէ Սիսակայ Հայկազնոյ՝ յորմէ և Սիւնիք. իսկ անկէ (Առանէն) առջի Աղուանից պատմութեան համար, կը խոստովանի որ «Հունիմ ինչ ասել զատոյգն ի պէտս լսողաց, մինչեւ ցՎաղարշակ արքայն Հայոց»։

427 . . «Այսպէս են Թադէոս Առաքելոյ աշակերտ Եղիշէի գալն և զՂուանս լուսաւորելն Քրիստոնէութեամբ, իր նահատակիլն, և յետ ժամանակաց նշխարաց յայտնուիլն Ուռնայր թագաւորի հաւատալն ի Քրիստոս և մկրտիլն ի սուրբ Լուսաւորչէն մերմէ, Տրդատայ և իր յաջորդաց գործերը յՂուանս. Գրիգորիսի Հայրապետ կարգիլն Աղուանից, և նահատակիլն ի Մաղքթաց, և իր և իրէն բերած սրբոց նշխարաց ծածկուիլն ու Վաչագանայ ատեն յայտնուիլն . . . ։ Ցաբեթէն սկսեալ Հայոց նահապետներ և Հայկազուն թագաւորներ կանուանէ, և կը յիշէ զԱռան ի նոյն Հայկազանց, և ապա Արշակունեաց ցերէն թագաւոր մը Աղուանից Վաչագան քաջ, որ իբրեւ երրորդ դարուն կիսուն թագաւորած կերեւի և անոր պայազատները կը համրէ մինչեւ ՅԹ, և մեծն Վաչագան, որ կըլլայ 10րդ թագաւորն Աղուանից։

428 . . . Այս թագաւորիս գործերը յիշելէն ետեւ՝ կանգնի պատմիչն Ս. Մեսրովպայ քարոզութեանը յՂուանս, և անոր աշակերտաց բնակութեանն ի Չղախ (Խաչենու կողմերը), և նահատակութիւն ի Հոնաց՝ որ հոն արշաւեր էին, զորս և Եզեկիէլ մարգարէին տուած անուամբ Ռոսմոսոքեան և Թորելական զօրք կանուանէ. և ասոնց զօրավարին հաւատալն ի Քրիստոս և նահատակիլն։

Կանգնի ի կէս Զ դարու, ի սկիզբն Հայոց Թուականին, երբոր Աբաս Կաթուղիկոս նստաւ Աղուանից և աթոռն ի Չոլայ փոխեց ի Պարտաւ, ուր և ժողովով մերժեց աղանդաւորները,